Հաճախակի տրվող հարցեր (ՀՏՀ)

Խոզուկ

1. Ի՞նչ է խոզուկը:

Խոզուկը վարակիչ հիվանդություն է (փոխանցվում է այլ մարդկանց), որն առաջանում է վիրուսից (մանրէ): Այն առավել հայտնի է այտերի փքվածություն և ծնոտի զգայունություն ու այտուցում (պարոտիտ) պատճառելու համար, սակայն կարող է լրացուցիչ բարդություններ առաջացնել մեծահասակների մոտ: **Պատվաստումը խոզուկի կանխարգելման լավագույն միջոցն է:**

2. Որո՞նք են խոզուկի ախտանիշները:

Ախտանիշները սովորաբար հայտնվում են վարակվելուց 16-18 օր հետո: Այս ախտանիշները կարող են տևել մինչև 10 օր: Որոշ մարդիկ, ովքեր հիվանդանում են խոզուկով, ունենում են մեղմ ախտանիշներ կամ ընդհանրապես չեն ունենում դրանք: Ամենատարածված ախտանիշներն են փքված այտերը և այտուցված գեղձերը՝ ականջի տակ ու ծնոտի մոտ: Այլ ախտանիշների մեջ են մտնում՝

- Ջերմություն
- Գլխացավ
- Մկանների ցավ
- Հոգնածություն
- Ախորժակի կորուստ
- Այտուցված գեղձեր՝ ականջի տակ

Որոշ դեպքերում կանայք կարող են ունենալ ձվարանների կամ կրծքագեղձերի բորբոքում (այտուցում), իսկ տղամարդիկ՝ ամորձիների այտուցում (ամորձաբորբ՝ օրխիտ): Այս բորբոքումը կարող է անպտղության պատճառ դառնալ: Խոզուկը կարող է նաև առաջացնել գլխուղեղի այտուցում (էնցեֆալիտ), ուղեղը և ողնուղեղը ծածկող հյուսվածքի այտուցում (մենինգիտ), խլություն (ժամանակավոր կամ մշտական): Անմիջապես դիմեք բժշկի, եթե կարծում եք, որ հնարավոր է, որ Դուք խոզուկ ունենաք:

3. Ինչպե՞ս է տարածվում խոզուկը:

Վիրուսը տարածվում է բերանից, քթից կամ կոկորդից եկող թքի կամ լորձի միջոցով: Այն կարող է տարածվել՝

- Հազալիս, փռշտալիս կամ խոսելիս
- Օգտագործելով այլ մարդկանց օգտագործած իրերը, որոնց վրա կարող է թուք լինել, օրինակ՝ սպասքը կամ ջրի շշերը
- Այլ մարդկանց հետ մասնակցելով սերտ շփումով գործողությունների, ինչպիսիք են սպորտը կամ համբուրվելը:

Վարակված անձը կարող է հիվանդությունը տարածել թքագեղձերի ուռչելուն նախորդող մի քանի օրից մինչև այտուցվելուց հինգ օր հետո:

4. Ինչպե՞ս է բուժվում խոզուկը:

Խոզուկի դեմ դեղամիջոց չկա: Առաջարկվող բուժումը անկողնային հանգիստն է, հեղուկները և ջերմությունն իջեցնող դեղերը: Խոզուկը սովորաբար անհետանում է վարակվելուց մի քանի շաբաթ հետո: Մեծահասակների մոտ խոզուկը կարող է շատ ծանր դառնալ: Եթե կարծում եք, որ ունեք խոզուկ, անմիջապես դիմեք բժշկի: Նախքան Ձեր բժշկի հետ խոսելը հեռու մնացեք այլ մարդկանցից կամ մեծ խմբերից այնպիսի վայրերում, ինչպիսիք են դպրոցը, մանկապարտեզը և սպասասրահները:

5. Ինչպե՞ս կարելի է կանխարգելել խոզուկը:

Խոզուկը կանխարգելելու լավագույն միջոցը պատվաստումն է: ԿԿԽ՝ MMR (կարմրուկ, խոզուկ, կարմրախտ) և ԿԿԽՄ՝ MMRV (կարմրուկ, խոզուկ, կարմրախտ և վարիցելա) պատվաստանյութերը անվտանգ և արդյունավետ են: Յուրաքանչյուր ոք, ով չի պատվաստվել կամ չի հիվանդացել, պետք է ստանա խոզուկ պարունակող պատվաստանյութի երկու դեղաչափ, օրինակ՝ MMR-ի կամ MMRV-ի: Երեխաները պետք է ստանան իրենց առաջին դեղաչափը 12 ամսականում, իսկ երկրորդը՝ 4-6 տարեկանում:



Գլխավոր կետեր

- Խոզուկը վարակիչ հիվանդություն է, որն առաջանում է վիրուսից:
- Խոզուկն առաջացնում է այտերի փքվածություն և ականջների տակ ու ծնոտի մոտ գտնվող գեղձերի այտուցվածություն:
- Պատվաստումը լավագույն միջոցն է՝ կանխելու խոզուկով վարակվելը կամ այն տարածելը:

Կանխարգելման խորհուրդներ

- Պատվաստվեք:
- Կապ հաստատեք Ձեր բժշկի հետ, եթե կարծում եք, որ ունեք խոզուկ կամ շփվել եք խոզուկով հիվանդ որևէ մեկի հետ:
- Մնացեք տանը, եթե հիվանդ եք:
- Ծածկեք Ձեր հազը և փռշտոցը: